

Գիտական հանրությունը հանդիսավորությամբ նշեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանի 75-ամյա հոբելյանը

Նոյեմբերի 10-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում գիտական հանրությունը նշեց ին-
ֆորմատիկայի և հաշվողական տեխնի-
կայի բնագավառի հայտնի մասնագետ,
ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ՀՀ ԳԱԱ ակա-
դեմիկոս Յուրի Շուքուրյանի 75-ամյա հո-
բելյանը: Տեղեկատվական տեխնոլոգիա-
ների ոլորտի զարգացման գործում ունե-
ցած մեծ ավանդի համար Յուրի Շուքուր-
յանին շնորհվեցին ՀՀ ԿԳՆ գիտության
պետական կոմիտեի, ԵՊՀ-ի, Հայաստա-
նի ազգային ճարտարագիտական համալ-
սարանի ոսկե մեդալներ, Բյուրականի աստղադիտարանի Վիկտոր Համբարձումյանի անվան հուշամեդալ:
Յուրի Շուքուրյանին շնորհավորեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԿԳՆ
գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ԵՊՀ-ի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթա-
կից անդամ Արամ Սիմոնյանը, Հայաստանի ազգային ճարտարագիտական համալսարանի ռեկտոր Ռատա-
նիկ Մարուխյանը, ՀՀ ԳԱԱ գիտական հաստատությունների ղեկավարներ, հայ գիտնականներ:



Իրար հաջորդող շնորհավորանքները հոբելյանի գի-
տական ակնառու վաստակի գնահատումն էին, տաղան-
ավոր գիտնականի, գիտության փայլուն կազմակերպ-
չի, ճշմարիտ մտավորականի, հրաշալի մարդու և հայի
ամբողջական նկարագիրը:

Ելույթները եզրափակեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վա-
դիմիր Բարխուդարյանը: Ինչպես ելույթ ունեցողը նշեց,
ինքը խոսում է ոչ իր անունից, այլ երաշխավորված է հո-
բելյանին փոխանցել ակադեմիայի ողջ կոլեկտիվի ջերմ
ու սրտառու շնորհավորանքները մեծանուն գիտնակա-
նին, հմուտ, անմիջական և մարդասեր ղեկավարին, մաղ-
թել հոբելյանին երկար տարիների կյանք, իսկական
մարդկային երջանկություն ու գիտական նորանոր հա-
ջողություններ:

1971-1986 թթ. աշխատելով Երևանի մաթեմատիկա-
կան մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում՝
Յուրի Շուքուրյանը ստացել է արագագործ և հուսալի է-
լեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) միկրոծրագրա-
յին կառուցվածքների ավտոմատացված նախագծման
համակարգերի մաթեմատիկական ապահովման ստեղծ-
ման կարևոր տեսական և կիրառական արդյունքները: Նա
խոշոր ներդրում է կատարել հաշվողական կառուցվածք-
ների սինթեզի ավտոմատահանրահաշվական մոտեցման
զարգացման մեջ:

Յուրի Շուքուրյանի ղեկավարությամբ և մասնակցու-
թյամբ ստեղծվել է հատուկ նշանակության միկրոկոմպյու-
տերների օպերացիոն համակարգ, որի համալրման, վե-
րականգնման հնարավորությունը և ցանցային միջոց-
ներն ապահովել են արտադրատեսակների հուսալի աշ-
խատանքը: Մշակվել են մի շարք կիրառական գործիքա-
յին ծրագրեր, որոնք էական ազդեցություն են թողել Հա-
յաստանում մշակված ԷՀՄ-ների մաթեմատիկական ապա-

հովման զարգացման վրա: Նրա կողմից ստացվել են նոր
արդյունքներ, որոնք վերաբերում են ծրագրերի թեստա-
վորման համար լրիվ օրինակների համակարգի կառուց-
մանը և մեծ ինտեգրալային սխեմաների վերիֆիկացմա-
նը:

Յուրի Շուքուրյանի կողմից ստացվել են նոր տեսա-
կան արդյունքներ տարաբաշխված մաթեմատիկական
մոդելների և զուգահեռ հաշվարկների վերաբերյալ: Նրա
գործում մասնակցությամբ ստեղծվել է ակադեմիայի հա-
մակարգչային ցանցը, մշակվել ու կատարելագործվել են
ՀՀ ԳԱԱ 30-ից ավելի ինստիտուտներ ընդգրկող ցանցի
ծրագրային ապահովման համակարգերը:

Ակադեմիկոս Շուքուրյանի ակտիվ մասնակցությամբ
ստեղծվեցին Արմվաստերը, հայկական հաշվողական
Գրիդ ինֆրակառուցվածքը և սկսվեցին աշխատանքներ
Հայաստանի ազգային սուպերկոմպյուտերային կենտրո-
նի ստեղծման ուղղությամբ, որը կնպաստի հաշվողական
գիտությունների զարգացմանը և դրա օգտագործմանը
Հայաստանի սոցիալական խնդիրների և տնտեսության
պահանջների համար:

Յուրի Շուքուրյանի ջանքերի շնորհիվ պահպանվեցին
և նոր զարգացում ստացան ՀՀ ԳԱԱ միջազգային կապե-
րը ինֆորմատիկայի և հարակից գիտությունների գծով:
Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ երկու տա-
րին մեկ կազմակերպվում են կոմպյուտերային գիտու-
թյան և ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջազգային գի-
տաժողովներ (CSIT):

Ծանրակշիռ է նրա վաստակը երիտասարդ մասնա-
գետների պատրաստման գործում: Նրա ղեկավարութ-
յամբ գիտական աստիճան են ստացել 20-ից ավելի երի-
տասարդներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Հայազգի հեղինակավոր գիտնական Արայոմ Օգանովը Հայաստանում

Նոյեմբերի 16-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է ժամա-
նակակից բյուրեղագիտության հիմնադիրներից մեկին՝ հայազգի գիտ-
նական, տեսաբան-բյուրեղագետ, պրոֆեսոր Արայոմ Օգանովին, ում
ստեղծած համակարգչային ծրագրից օգտվում են հարյուրավոր լաբո-
րատորիաներ: Հեղինակավոր գիտնականը Հայաստանում է գտնվում
Հանրապետության նախագահի հովանու ներքո իրականացվող Երիտա-
սարդ գիտնականների աջակցության ծրագրի ղեկավար մարմնի հրավե-
րով և նույն օրը Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտե-
տում նյութերի նախագծման նորագույն մեթոդների վերաբերյալ Երիտա-
սարդ գիտնականների համար բաց դասախոսություն է կարդացել:

Մեծանուն գիտնականը հյուրընկալվեց նաև ՀՀ գիտությունների ազ-
գային ակադեմիայում: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և
Արայոմ Օգանովը քննարկեցին գիտական համագործակցության հեռան-
կարները:

ՄԵԾԱՐՈՒՄ

Հոկտեմբերի 29-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում մեկ-
նարկեց «Արաբագիտության արդի հիմնախնդիրները»
գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրո-
ֆեսոր, հայ արաբագիտության հիմնադիր Նիկոլայ
Հովհաննիսյանի 85-ամյա հոբելյանին:

Նիստը բացեց և հակիրճ խոսքով անվանի գիտնա-
կանին ներկայացրեց ԳԱԱ արևելագիտության ինստի-
տուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆ-
րաստյանը:

Լիագումար նիստում հնչած զեկուցումները մեծա-
նուն գիտնականի անուրանալի վաստակի, նրա փայ-
լուն հետազոտությունների, անսպառ եռանդի և բեղմ-
նավոր գրչի արձանագրումն էին, բարձր ու արժանի
գնահատականը գիտության մեծ նվիրյալին:

Նիկոլայ Հովհաննիսյանի գիտական աշխատու-
թյունները նվիրված են արաբական երկրների պատ-
մության, նրանց անկախ և ինքնիշխան պետություն-
ների կազմավորման, Մերձավոր և Միջին Արևելքում
միջազգային և տարածաշրջանային հարաբերություն-
ներին, Հայաստանի արտաքին քաղաքականության
և արաբա-հայկական միջպետական հարաբերություն-
ներին, քաղաքական իսլամի, հայոց ցեղասպանութ-
յան, դարաբաղյան կոնֆլիկտի հիմնախնդիրներին:

Նա «Արարատ» գիտությունների միջազգային ա-
կադեմիայի (Փարիզ, 1997), Նյու Յորքի ԳԱ-ի (1999),
Ազգային անվտանգության հիմնախնդիրների գիտու-
թյունների միջազգային ակադեմիայի (Մոսկվա, 1999),
Բնության և հասարակության մասին գիտությունների
միջազգային ակադեմիայի (Գերմանիա, 2005), Սիրիա-
յի արաբական գիտության պատմության (Հալեբ,
1985), Ազգային աշխարհագրական (ԱՄՆ, 2002) ընկե-
րությունների Ցեղասպանության ուսումնասիրության
միջազգային ասոցիացիայի (ԱՄՆ, 2005) անդամ է:
2006-ից ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
տնօրենի խորհրդականն է:

Նիկոլայ Հովհաննիսյանը ՀՀ գիտության վաստա-
կավոր գործիչ է: Պարգևատրվել է Մովսես Խորենա-
ցու մեդալով, «Հայոց Մեծ եղեռն 1915-2005» և Նան-
սենի անվան հուշամեդալներով:

Ի դեպ, ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը հոկտեմ-
բերի 28-ին հետևյալ հրամանագիրն է ստորագրել.
«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը մատու-
ցած ծառայությունների համար և 85-ամյակի կապա-
կցությամբ պատմական գիտությունների դոկտոր, պրո-
ֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստա-
կավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանին պարգևատ-
րել «Երախտագիտություն» մեդալով:

ՆՈՐ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Միջազգային մրցույթներում ԳԱԱ «Գիտություն» հրա-
տարակցության ստացած մի շարք մրցանակներին միան-
գամից ավելացան ևս երեքը:

Գիտությունների ակադեմիաների միջազգային ասո-
ցիացիայի (MAAH) «Գիտական գիրք» ամենամյա միջազ-
գային մրցույթում, որպես «Լավագույն գիտահրատա-
րակչական նախագիծ», «Հաղթողի դիպլոմ» է շնորհվել
«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազ-
գային ակադեմիան 70 տարում» (հայերեն և ռուսերեն)
գրքերին: Բանասիրական գիտությունների թեկնածու Գ.
Վարադյոյանի «Апарат — сакральная территория. По
запискам европейских путешественников» աշխատութ-
յունը նույն մրցույթի «Հասարակական գիտություններ»
անվանակարգում արժանացել է «Դափնեկրի դիպլոմի»:
Իսկ ԱՊՀ երկրների՝ Ալմաթիում կայացած «Գրքարվեստ»
միջազգային մրցույթում պատմական գիտությունների
թեկնածու Ռ. Վարդանյանի կազմած «Սիլլոգե հայկական
դրամների. Հայաստան (Կիլիկիա, հ.1, Լևոն Մեծագործ)»
գիրքն արժանացել է դիպլոմի:





Լրացավ ակնաավոր գիտնական և գիտության կազմակերպիչ, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի անվանի մասնագետ, ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Յուրի Հայկի Հուբուրյանի ծննդյան 75-ամյակը: Յուրի Հուբուրյանը ծնվել է 1940 թ. նոյեմբերի 5-ին Երևանում: Ոսկե մեդալով ավարտելով դպրոցը, նա բարձրագույն կրթություն է ստացել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում՝ մասնագիտանալով հաշվողական տեխնիկայի բնագավառում: Ասպիրանտական ուսուցումն անց է կացրել Կիևում՝ ակադեմիկոս Վ.Մ. Գլուշկովի ավտոմատների հանրահաշվական տեսության նշանավոր դպրոցում: Այստեղ Յու. Հուբուրյանը տեսական հիմնավոր ու խոր գիտելիքներ է ստանում և ձեռք բերում դրանք գործնականում կիրառելու հմտություն: Գիտության տեսական և գործնական ուղղությունների համատեղումը դարձավ նրա հետագա գիտական գործունեության անխախտ սկզբունքը:

Մեծավաստակ գիտնականը, գիտության փառանդավոր կազմակերպիչը (Յուրի Հուբուրյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

1971 թ. Յուրի Հուբուրյանն աշխատանքի է անցնում Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում՝ ղեկավարելով ծրագրավորողների մի մեծ կոլեկտիվ: Նա նշանակալից աշխատանքներ է կատարում հաշվողական մեքենաների և համակարգերի ստեղծման բնագավառում: Դրանք վերաբերում էին ԷՅԱ-ների մախագծման ավտոմատացված համակարգերի հետազոտմանը և մշակմանը: Նրա ղեկավարությամբ ստեղծվել է օպերացիոն համակարգ, որն ապահովել է արտադրատեսակների հուսալի աշխատանքը և այլ կիրառական ծրագրեր: Հոբբյարի երիտասարդ տարիների տեսական և կիրառական հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին Կիևում պաշտպանված թեկնածուական (1968 թ.) և դոկտորական (1982 թ.) ատենախոսություններում:

1986 թ. ՀՀ գիտությունների ակադեմիայի ղեկավարության հրավերով Յուրի Հուբուրյանը ստանձնում է ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի (այն ժամանակ՝ հաշվողական կենտրոն) տնօրենի պաշտոնը: Ինստիտուտի ղեկավարումը երիտասարդ մասնագետին վստահվեց 1990-ական թվականների տնտեսական ճգնաժամի ժանր տարիներին, երբ պայքարում էին գիտության առկա վիճակը, թեկուզ կորուստներով, միայն պահպանելու համար: Յու. Հուբուրյանի անուրանալի գիտական և գիտակազմակերպական գործունեությանը շնորհիվ հաջողվեց այդ տարիներին ոչ միայն հիմնականում պահպանել ինստիտուտի գիտական նե-

րուժը, այլ նաև ուրվագծել ինստիտուտի հեռանկարային զարգացման նոր տեսանկյուններ:

Յու. Հուբուրյանի կողմից ստացվեցին նոր տեսական արդյունքներ տարաբաշխված մաթեմատիկական մոդելների և զուգահեռ հաշվարկների վերաբերյալ:

Նրա գործուն մասնակցությամբ ստեղծվեց ակադեմիայի համակարգչային ցանցը, մշակվեցին ու կատարելագործվեցին ՀՀ ԳԱԱ 30-ից ավելի ինստիտուտներ ընդգրկող ցանցի ծրագրային ապահովման համակարգերը: Յու. Հուբուրյանի գիտական և գիտակազմակերպական ակտիվ գործունեությունն արժեվորվեց 1990թ., երբ նա ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996թ.՝ իսկական անդամ (ակադեմիկոս):

Մեծ է Հուբուրյանի ավանդը Հայաստանի տեղեկատվական համակարգչային գիտակրթական ցանցի ստեղծման, զարգացման և եվրոպական-ակադեմիական կառուցվածքների հետ միացման գործում: Նրա ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին Արմլիաստերը, հայկական հաշվողական Գրիդ ինֆրակառուցվածքը, և սկսվեցին աշխատանքները Հայաստանի ազգային սուպերկոմպյուտերային կենտրոնի ստեղծման ուղղությամբ: Կենտրոնը կնպաստի հաշվողական գիտությունների զարգացմանը և դրա օգտագործմանը Հայաստանի սոցիալական խնդիրների և տնտեսության պահանջների համար:

Յուրի Հուբուրյանի ջանքերի շնորհիվ պահպանվեցին և նոր զարգացում ստացան ՀՀ ԳԱԱ միջազգային կապերը ինֆորմատիկայի և հարակից գիտություն-

ների գծով: Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ երկու տարին մեկ պարբերաբար կազմակերպվում են Կոմպյուտերային գիտության և ինֆորմացիոն տեխնոլոգիաների միջազգային գիտաժողովներ: Այս տարի անցկացվեց 10-րդ միջազգային գիտաժողովը, որին տեղի գիտնականներից բացի մասնակցեցին ավելի քան 50 արտասահմանյան ճանաչված գիտնականներ: Լայն ճանաչման են արժանացել նրա աշխատանքներն ավտոմատների մաթեմատիկական տեսության և դրա կիրառությունների բնագավառում:

Յուրի Հուբուրյանին հատուկ է կոմպյուտերային տեխնոլոգիաների արդի ուղղությունների զարգացման նոր միտումների զգացումը: Այդ ունակությունը և գիտական հիմնախոցերի ընդգրկման լայն մտահորիզոնը հնարավորություն են ընձեռում նրան Հայաստանում հաշվողական տեխնիկայի և ինֆորմատիկայի բնագավառի հետազոտությունների զարգացումը պահպանելու միջազգային չափանիշներին համահունչ:

Ծանրակշիռ է նրա վաստակը երիտասարդ մասնագետների պատրաստման գործում: Նրա անձնական ղեկավարությամբ գիտական աստիճան են ստացել 20-ից ավելի երիտասարդներ: Տասնամյակներ շարունակ կադրեր է աճեցրել ատենախոսությունների պաշտպանության եղանակով՝ մասնագիտական գիտական

խորհրդի միջոցով, որի նախագահի պաշտոնը վերապահվել է իրեն: Ավելի քան չորս տասնամյակ անընդմեջ դասախոսական-մանկավարժական աշխատանք է կատարում Երևանի պետական համալսարանում:

Հայաստանի Հանրապետությունը բարձր է գնահատել Յուրի Հուբուրյանի երկարամյա գիտական և գիտակազմակերպական գործունեությունը՝ շնորհելով նրան Սուրբ Մեսրոպ Մաշտոցի և Պատվոնշան շքանշաններ և արժանացնելով գի-

տության վաստակավոր գործչի կոչման:

Յուրի Հուբուրյանը հմտորեն համատեղում է իր և իր գործընկերների նկատմամբ խստապահանջությունը նրբանկատ ու հետևողական ուշադրության հետ: Այդ հատկանիշների և պարզ, անմիջական ու բարեկիրթ վերաբերմունքի շնորհիվ գիտական կոլեկտիվը նրա ղեկավարությամբ աշխատում է համախմբված ու արգասավոր, որի արդյունքը գիտական նոր ձեռքբերումներն են: Աշխատանքային ոճի օրինակելի այդ հատկանիշներով Յուրի Հուբուրյանը 30 տարի գլխավորում է ինստիտուտի գործունեությունը, նախ՝ որպես տնօրեն (20 տարի), ապա՝ գիտական ղեկավար: Քսան տարի վարում է ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պատասխանատու պաշտոնը:

Բնատուր մտավորականի արժանապատիվ կեցվածքով պրոֆեսոր Յուրի Հուբուրյանը բարերար ազդեցություն է թողնում շրջապատի վրա, ակադեմիական և մասնագիտական ոլորտում: Նա բնականից հատուկ հակվածություն ուսեր ունի կերպարվեստի, առհասարակ արվեստի նկատմամբ, մշտապես հարաբերվել է մշակույթի այդ ճյուղի հետ, ճանաչվել նրանց շրջապատում:

Իր 75-ամյակի օրը հոբբյարին ի սրտե մաղթում ենք քաջառողջություն, արևշատություն, երկար և արգասավոր գործունեություն՝ ի փառս հայրենական գիտության:

**Ռ. ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար
Վ. ՍԱՀԱԿՅԱՆ ՀՀ ԳԱԱ ԻԱՊԻ տնօրեն**

Միջազգային ֆորում՝ Նվիրված Մոսկվայի Լազարյան ճեմարանի 200-ամյակին

Հոկտեմբերի 23-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացավ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի շրջանավարտների երրորդ միջազգային ֆորումը՝ Նվիրված Մոսկվայի Լազարյան ճեմարանի հիմնադրման 200-ամյակին:

Համաժողովին մասնակցում էին ավելի քան 300 ներկայացուցիչներ՝ շուրջ հինգ տասնյակ երկրներից:

Համաժողովի բացման արարողությանը ներկա էր և ելույթ ունեցավ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը:

Երևանյան ֆորումի մասնակիցներին ողջույնի ուղերձ էր հղել նաև Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, որը հատկապես ընդգծել էր ռուսական արևելագիտության սկզբնավորման և կայացման գործում Մոսկվայի Լազարյան ճեմարանի անուրանալի ավանդը:

Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի ղեկավար, ՌԴ ակադեմիկոս Անատոլի Տորկունովը ՀՀ նախագահին հանձնեց Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի գիտական խորհրդի որոշման համաձայն՝ թողարկված հատուկ հուշամեդալը, որով պարգևատրվել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Ֆորումի շրջանակներում ՀՀ նախագահի մասնակցությամբ տեղի ունեցավ Լազարյան ճեմարանի 200-ամյակին նվիրված մամուլականի մարման արարողությունը: Սերժ Սարգսյանը մասնակցեց նաև Լազարյան ճեմարանի 200-ամյակին և Մոսկվայի արևելագիտության դպրոցին նվիրված հրատարակությունների և ՄՄՀՊԻ-ի գրքի թանգարանի պահուստային ֆոնդի շնորհանդեսին, դիտեց Արևելյան լեզուների Մոսկվայի Լազարյան ճեմարանին նվիրված ցուցահանդեսը:

Ֆորումի մասնակիցները բացման արարողությունից առաջ Ծիծեռնակաբերդի համալիրում հարգեցին Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 23-ին ընդունել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի ղեկավար Անատոլի Տորկունովին: ՀՀ նախագահն ընդգծել է Անատոլի Տորկունովի ծանրակշիռ ներդրումը բուհի լավագույն ավանդույթների պահպանման գործում և ՌԴ արտաքին գործերի նախարարության Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (համալսարանի) ղեկավար, ակադեմիկոս Անատոլի Վասիլի Տորկունովին պարգևատրել բարձր պարգևով՝ Պատվո շքանշանով:

ՄԴԻՄՕ-ի ղեկավար Անատոլի Տորկունովին հանձնվեց ՀՀ ԳԱԱ-ի պատվավոր դոկտորի դիպլոմ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ս.թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ ԳԱԱ-ն պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել ՄՄՀՊԻ-ի ղեկավար Անատոլի Տորկունովին:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության հոկտեմբերի 30-ի ընդլայնված նիստում տեղի ունեցավ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտի (ՄԴԻՄՕ) ղեկավար Անատոլի Տորկունովին ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում շնորհելու արարողությունը: ՀՀ ԳԱԱ-ն այս կոչումն Անատոլի Տորկունովին շնորհել է Հայաստանի դիվանագիտական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ ներդրման համար:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: ՀՀ ԳԱԱ նախագահը նշեց, որ ՄԴԻՄՕ-ն տվել է ավելի քան 100 հայ շրջանավարտ, ովքեր աշխատում են տարբեր դիվանագիտական պաշտոններում: Նա նաև կարևորեց ՄԴԻՄՕ-ի դերը Երևանի պետական համալսարանում միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ստեղծման և կայացման գործում: Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա այցելության առթիվ Անատոլի Տորկունովին նվիրեց հայերեն առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագրքի» կրկնօրինակը: «Ուրբաթագիրքը» լույս է տեսել Վենետիկում 1512 թ.:



ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը



Մերի ինստիտուտում:

1974 թ. մա ավարտում է «Բառային իմաստաբանություն» աշխատանքը, որի հիման վրա պաշտպանում դոկտորական ատենախոսություն, սակայն այն պաշտոնապես հնարավոր եղավ իրականացնել միայն տասը տարի անց, 1984 թ., Միսկուն: Այդ գրքի հրապարակմանը իշխանությունները նույնպես փորձում էին խոչընդոտել:

1979 թ.-ին Արեւսյանի գլխավորությամբ իրականացվում է կոլեկտիվ մի աշխատանք, որի արդյունքում հրատարակվում է անգլերեն-ռուսերեն հոմանիշների բառարանը, որը մինչ օրս պարբերաբար վերահրատարակվում է:

Հարկ է նշել, որ չնայած բազմաթիվ խոչընդոտների, 1980-ականներին Արեւսյանը շարունակում էր զարգացնել «Իմաստ-տեքստ» տեսությունը: Հենց այդ շրջանում մա հրապարակեց հակադրական ռուս-հունգարական բառարանը, որը հրապարակվեց Վիեննայում:

1985 թ. ՌԳԱ տեղեկատվության փոխանցման հիմնախնդիրների ինստիտուտում Յու. Արեւսյանը ղեկավարում էր համակարգչային լեզվագիտության լաբորատորիան: 1990 թ. մա վերադառնում է ՌԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտ, որտեղ 1994 թ.-ից ղեկավարում է տեսական իմաստաբանության բաժանմունքը: Այդ տարիների ընթացքում Արեւսյանը դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում, Ավստրալիայում, ԱՄՆ-ում և Գերմանիայում: Յու. Արեւսյանը երկար տարիներ ղեկավարել է հայտնի «Տեսական իմաստաբանություն» սեմինարը, որն այդ տարիներին դարձել էր Մոսկվայի լեզվաբանության գլխավոր կենտրոններից մեկը:

Իսկ արդեն 1992 թ., երբ ԽՍՀՄ-ում այլախոսություն հասկացությունը անցել էր պատմության գիրկը, բարձր գնահատվեց մրա աշխատանքը և Արեւսյանը ընտրվեց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի լիիրավ անդամ:

1993 թ. Արեւսյանի ջանքերով հրատարակվեց ծավալուն անգլերեն-ռուսերեն մոր բառարան, որտեղ բառարանային հոդվածների ստեղծումը կատարվում էր ժամանակակից տեսական և գործնական բառարանագրության ձեռքբերումների հաշվարկով. այդ աշխատանքը մինչ այժմ համարվում է չգերազանցված:

Հաշվի առնելով Յուրի Արեւսյանի գիտական ձեռքբերումները և սերտ կապերը Հայաստանի հետ, բարձր գնահատելով մրա ավանդը գիտության մեջ, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին մրան ընտրեց ԳԱԱ արտասահմանյան անդամ:

Սփյուռքի բաժին

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Յուրի Արեւսյանը ծնվել է 1930 թ. փետրվարի 2-ին Մոսկվայում, խորհրդային պետական անվտանգության համակարգի աշխատակից Դերենիկ Արեւսյանի ընտանիքում: Հայրը մի քանի լեզուների գիտակ էր և, ըստ էության, սա մեծ ազդեցություն ունեցավ Արեւսյանի մասնագիտական կողմնորոշման համար:

1953թ. Յու. Արեւսյանը գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի անգլերեն լեզվի բաժինը: Նրան առաջարկվել է շարունակել կրթությունը նույն բուհի ասպիրանտուրայում, որն էլ Արեւսյանը մեծ հաջողությամբ իրականացրեց: 1958 թ. մա պաշտպանեց ժամանակակից անգլերենում դարձվածաբանական

Յուրի Արեւսյան

հոմանիշները թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

Յու.Արեւսյանի գիտական հետքերը ինքնուրույն են, բայց հետազոտությունների հիմնական բնագավառը եղել է բառային իմաստաբանությունը: 1950-ական թթ. վերջերին, երբ մա մոր էր սկսել զբաղվել լեզվաբանությամբ, այդ բնագավառը համարվում էր «արտասովոր» և գտնվում էր լեզվի հետազոտությունների շրջանակներում: Այդ պատճառով Արեւսյանի կողմից իմաստաբանության ուսումնասիրումը սկսվել է լեզվաբանության պատմության և ավանդույթների հետազոտումից: Նրա գրչին են պատկանում իմաստաբանության պատմության մի քանի լուրջ ուսումնասիրություններ, որի վերջնարդյունքում՝ 1966 թ. հրատարակեց «Ժամանակակից կառուցվածքային լեզվաբանության գաղափարները և մեթոդները» աշխատությունը: Արեւսյանի առաջին գիրքը մեծ հետաքրքրություն և ժողովրդականություն վայելեց, և այն երկար տարիներ մնաց այդ ոլորտում ամենապահանջված գրքերից մեկը: Այն մա թարգմանվեց գրեթե բոլոր եվրոպական լեզուներով:

Ասպիրանտական ուսուցմանը զուգահեռ մրան վստահվեց դասախոսական աշխատանք: 1954-1960 թթ. մա դասավանդել է Մոսկվայի Օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում, 1960-1972 թթ. աշխատել է ԽՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտում, որտեղից հեռացվել է քաղաքական պատճառ-

ներով. մա պաշտպանել էր այլախոսի համարվող գրականագետների՝ Ա. Դ. Սինյավսկոյի, Յ. Մ. Դանիելի, Կ. Ի. Բաբիցկոյի և այլոց տեսակետները:

1960-ականների վերջերին Արեւսյանի ուշադրության ծիրում հայտնվում է շարահյուսական իմաստաբանության խնդիրները: Այդ շրջանում մա համագործակցել է լեզվաբան Ս. Կ. Շահունյանի հետ, որը հեռանալով ԽՍՀՄ-ից, դասավանդում էր Միացյալ Նահանգների Յելի համալսարանում: Այդ համագործակցության շնորհիվ Արեւսյանը սկսեց զարգացնել «կիրառական քերականության» իր մոտեցումները: Արդյունքում 1967 թ. Արեւսյանը լույս ընծայեց իր երկրորդ մենագրությունը՝ «Ռուսերեն բայի իմաստաբանության փորձարարական ուսումնասիրությունը» վերտառությամբ, որով փորձում էր կառուցել ռուսական բայերի մանրամասն դասակարգումը՝ հիմնվելով կառավարման մոդելների փոփոխականության տեսակետի վրա:

Ռուսաց լեզվի ինստիտուտից հեռանալուց հետո Արեւսյանը 1972-1985 թթ. աշխատել է ինֆորմեկտոր ինստիտուտի մասնաճյուղում, որտեղ ղեկավարել է ավտոմատ թարգմանությամբ զբաղվողների խումբը: Ինֆորմեկտոր ինստիտուտում և ինֆորմատիկայի փոխանցման պրոբլեմների ինստիտուտում մեքենայացված թարգմանության վրա Արեւսյանի աշխատանքը բերեց փորձնական համակարգերի ստեղծմանը, որի ուղղությամբ աշխատանքը շարունակվում է մինչ օրս՝ ՌԳԱ ինֆորմացիայի փոխանցման պրոբլեմ-

ՃԱՆԱԶՎԱԾ ՎՐԱՑԱԳԵՏԸ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՌԱՆԴՈՒՆ ԳՈՐԾԻՉԸ

Գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի գրողների միության անդամ Հրաչյա Բայրամյանը ծնվել է 1945 թ. հունիսի 18-ին Տավուշի մարզի Բաղանիս գյուղում: 1969 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելագիտության (պարսից լեզու և գրականություն) բաժինը և Թբիլիսիի պետական համալսարանի վրաց բանասիրության ֆակուլտետը:

Արգասավոր է Բայրամյան գիտնականի ուղին. մրա հետաքրքրությունների ոլորտում են վրաց լեզուն և գրականությունը, համեմատական-գլոբալական քերականությունը, տեսական և գործնական թարգմանությունը: Հեղինակել է շուրջ 150 հետազոտական աշխատանք, որոնք հայերեն, ռուսերեն, վրացերեն հրապարակվել են Հայաստանի և արտերկրի գիտական տարբեր պարբերականներում, Հա-

յաստանում հրատարակված հանրագիտարաններում տպագրված հոդվածները վերաբերում են վրաց մոր և մորազույն գրականությանը, հայ-վրաց գրական-պատմամշակութային առնչություններին: Հրաչյա Բայրամյանը կազմել է ժողովածուներ, գրել առաջաբաններ, խմբագրել գրքեր, կարդացել գեկուցումներ հայ և վրաց մեծանուն գրողների, դրամատուրգների և գիտնականների հոբելյանների առթիվ Հայաստանում և արտասահմանում կազմակերպված գիտաժողովներում, նստաշրջաններում ու հանդիսություններում, ինչպես մա հայագիտության ու վրացագիտությանը նվիրված միջազգային գիտաժողովներում՝ Երևանում և Թբիլիսիում: Հեղինակել է «Ակնարկներ վրաց մոր գրականության պատմության (1800-1890)», «Վրաց գրականությունը V-XIX դարերում», «Վրաց լեզու» (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն), «Էջեր հայ-վրացական գրական

կապերի պատմությունից» ուսումնական ձեռնարկները, կազմել, խմբագրել և ծանոթագրել «Ձայն բարեկամության», որ իր տեսակով եզակի է, «Վրացական պոեզիա» («Ուսանողի գրադարան» մատենաշար), «Հայ գրողները վրաց գրականության մասին», «Վրաց երկինք» («Համաշխարհային գրականություն պատմաների համար» մատենաշար) ժողովածուները, որոնք հայ իրականության մեջ լույս են տեսել առաջին անգամ և բարձր գնահատականի արժանացել հայ և վրաց մասնագետների կողմից: Նրա գրչին են պատկանում մա «Հայ-վրաց գրական, պատմամշակութային հարցերը վրաց մանուկում» գիրքը, «Ուղեցույց աստղը» ժողովածուն, որի մեջ ի մի են բերված Հ. Թումանյանի ստեղծագործությունները նվիրված Վրաստանին ու վրաց ժողովրդին, ինչպես և վրաց նշանավոր գրողների գնահատանքի խոսքերն ամենայն հայոց բանաստեղծի մասին: Տաղանդաշատ

վրացագետը կազմել է գրուցարաններ, բազմաթիվ վրացի գրողների գործեր թարգմանել հայերեն (հրատարակել է շուրջ քսան գիրք): Մայր բուհում Հրաչյա Բայրամյանի գիտահետազոտական գործունեությունն ընթանում է հետևյալ ուղություններով՝ վրաց գրականության պատմություն, հայ-վրաց գրական-մշակութային կապեր, հայերենից վրացերեն, վրացերենից հայերեն կատարված գեղարվեստական թարգմանություններ: Նրա ղեկավարած ԵՊՀ ՀՀ հայ-վրացական հարաբերությունների բաժինն այսօր արդյունավետ գործունեություն է ծավալում վրաց գրականության պատմության, հայ-վրացական լեզվական-բառարանագրական առնչությունների, հայ-վրացական գրական և պատմամշակութային կապերի, վրացերեն լույս տեսած հայագիտական աշխատությունների ուսումնասիրության, դրանցից լավագույնների հայերեն թարգմանության ու հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

Հրաչյա ԲԱՆՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու



քի նախագիծ, որով անօրինական ճանապարհով երկիր մտած փախստականը դատապարտվում է երեք տարվա բանտարկության: Նա զորքեր է կենտրոնացրել Չեխիայի սահմանի վրա՝ կանխելու փախստականների ներթափանցումը Յունգարիա: Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Կամերոնը, որն անթաքույց թշնամական դիրք է գրավել միգրանտների նկատմամբ, օրերս պառլամենտում բացեիքաց դատապարտեց Շենգենյան համաձայնագրի ընդունումը՝ գտնելով, որ սխալ էր եվրոպական երկրների միջև սահմանների վերացումը, որն այժմ հնարավորություն է տալիս ասիական և աֆրիկյան փախստականներին ներս սողոսկելու եվրոպական երկրներ: Գերմանիան, Չեխիան և Ավստրիան արդեն որոշում են ընդունել ուժեղացնել իրենց սահմանների հսկողությունն ընդդեմ գաղթականների ներթափանցման: Գաղթականների նկատմամբ ոչ բարյացակամ դիրքորոշում են դրսևորում նաև Եվրամիության մյուս անդամ-երկրները, մասնավորապես Լեհաստանը, Ռումինիան, Բուլղարիան, Մերձբալթյան եռյակը և այլն: Իսկ եվրոպական սիրողական մակարդակի որոշ «տեսաբաններ» հիստերիա են բարձրացրել, թե այն, ինչ տեղի է ունենում այժմ Եվրոպա ասիա-աֆրիկյան գաղթականության հոսքի հետևանքով, դա «կոլապս է» և «համամարդկային ապոկալիպսիսի սկիզբը»:

Ասիայի և Աֆրիկայի տարբեր երկրներից գաղթականության հոծ զանգվածների ներխուժումը Եվրոպա տրամաբանական արտահայտությունն է այն քստմեն-

հանդերձ, անցել են այդ խալիֆայության տիրապետության տակ: Իսկ Իսլամական պետության դեմ ուղարկվող ամօղաչու ինքնաթիռների ռմբակոծումներից ավելի շատ տուժում են խաղաղ բնակիչները, քան թե սալաֆիական իսլամական խաժանուժը: Իսկապես, հանելուկներն ավելի շատ են, քան հավաստի պատասխանները, մանավանդ որ Իսլամական պետությանը պաշտպանող, օգնող և աջակցող մի շարք երկրներ հանդես են գալիս նրա հակառակորդի դիմակի տակ:

Իրաքյան մոդելը հետագայում օրինակ ծառայեց ԱՄՆ-ի և եվրոպական մի շարք երկրների համար՝ համանման քաղաքականություն իրականացնելու նաև աշխարհի այլ մասերում, մասնավորապես Մերձավոր Արևելքի և Յուսիսային Աֆրիկայի արաբական երկրների հանդեպ: Ինչպես հայտնի է, 2011թ. հունվարին սկսվեց համաարաբական ապստամբությունը, որի կենտրոններն էին Թունիսը, Եգիպտոսը, Սիրիան, Եմենը, Լիբիան, ինչպես նաև Ալժիրը, Մարոկկոն, Բահրեյնը, Քուվեյթը, Չոդդանանը և արաբական մյուս երկրները, որոնց թիվն այսօր հասնում է 18-ի: Անհասկանալի պատճառով դա հորջորջվեց «Արաբական գարուն», թեև դա տարվա որևէ եղանակի հետ ոչ մի առնչություն չունի: Մենք գտնում ենք, որ դա համաարաբական ըմբոստություն է հանուն արաբական հասարակության արդիականացման: Հենց այդ հանգամանքն անհանգստացրեց ԱՄՆ-ին և եվրոպական ա-

ՄՈՒԱՄԱՐ ԿԱՂԱՖԻԻ ԱՆԵԾՔԸ

Մենք ակամատեսներն ենք մի նոր ողբերգության, որ համաշխարհային բնույթ է կրում: Խոսքը Մերձավոր Արևելքից և Աֆրիկայից հարյուրհազարավոր փախստականների անկազմակերպ, հախուռն, «ոչ լեզալ», սակայն հարկադրական ներխուժումն է Եվրոպա, մասնավորապես Գերմանիա, Ավստրիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա և հարակից երկրներ: Նրանք՝ ծեր ու մանուկ, կին ու տղամարդ, հիվանդ ու զառամյալ, լքելով իրենց երկրները, փորձում են ապաստան գտնել եվրոպական երկրներում՝ համարելով դրանք իրենց համար որպես «փրկության խարիսխ»:

Իսկ ո՞րն է պատճառը: Պատճառները շատ են և բազմատեսակ: Նշված տարածաշրջանի երկրներում տիրող քաղաքական անկայունությունը, տարածաշրջանում անվտանգության ու ապահովության բացակայությունը, ահաբեկչությունը, սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, հեռանկարի բացակայությունը, ռազմական գործողությունները, որոնք միշտ չէ որ հասկանալի են , թե ով ում դեմ և ինչի համար է պատերազմում, երեկվա դաշնակիցների վերածումն անհաշտ թշնամիների, ահա դրդապատճառների ոչ լրիվ ցանկը, որը ստիպում է հարյուրհազարավոր մարդկանց դառնալ գաղթական, որոնց թիվն այսօր արդեն մոտենում է հինգ միլիոնի: Հախուռն կերպով բռնելով գաղթականի ցուպը և դեպի Եվրոպա գաղթի ճանապարհը՝ նրանք «մոռանում» են , որ իրենց այդ անելանելի ծանր դրության համար պատասխանատվության զգալի բաժինն ընկնում է նաև հենց այդ եվրոպական երկրների վրա, որոնք որպես գաղութատեր պետություններ երկար տարիներ թալանել և կողոպտել են Ասիայի և Աֆրիկայի երկրները և իրենց երկրների բարեկեցությունը կառուցել կողոպուտի ու թալանի վրա: Իսկ ասիական և աֆրիկյան երկրների կողմից անկախություն ձեռք բերելուց հետո նախկին գաղութատեր եվրոպական պետություններն ամեն կերպ փորձում են նրանց պահել իրենց ազդեցության ոլորտում և անուղղակի տիրապետության ներքո:

Իսկ ինչպե՞ս է այդ Եվրոպան դիմավորում այսօր Ասիայից և Աֆրիկայից եկող փախստականների հոսքին: Ամեն կերպ, սակայն, ոչ ծաղկեփնջերով: Եվրոպական երկրներն ամեն տեսակի խոչընդոտներ, այդ թվում՝ իրավական, ֆինանսական, տրանսպորտային և այլ բնույթի դժվարություններ են ստեղծում եվրոպական տարածաշրջանում նրանց հաստատման դեմ: Նրանց թշուռ են մի երկրից մյուսը, իսկ առավել արմատական հակառակորդները կոչ են անում փախստականներին սահմանների մոտ դիմավորել զնդացիորներով: Յունգարիան իր սահմանների վրա փշալարներով ծածկված քարե պատնեշ է բարձրացրել և պատրաստել օրեն-

լի և դատապարտման արժանի քաղաքականության, որ երկար տարիներ վարել են ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան Մերձավոր և Միջին Արևելքում և Աֆրիկայում՝ աջակից ունենալով թուրքիային և տարածաշրջանային մի շարք այլ երկրների, ինչպես Սաուդյան Արաբիան, Կատարը և այլն: Այդ քաղաքականության սկիզբը դրվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշ Կրտսերի կառավարման ժամանակ, ինչն ինքնին նոր փուլ էր նշանակում միջազգային հարաբերություններում:

2003թ. մարտին ԱՄՆ-ի և նրա գլխավորած կոալիցիոն ուժերը ներխուժեցին Իրաք՝ պատրվակ բռնելով, թե Իրաքը պատրաստում է միջուկային և քիմիական-կենսաբանական զանգվածային ոչնչացման զենք: Թեև դա չհաստատվեց, և միջազգային հատուկ հանձնաժողովը հայտարարեց, որ Իրաքը նման զենք չունի, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշ Կրտսերը և Մեծ Բրիտանիայի վարչապետ Թոնի Բլեյրը, ամտեսելով հանձնաժողովի այդ եզրակացությունը, շարունակեցին ռազմական գործողությունները, որոնք ավարտվեցին ապրիլին՝ Իրաքի պարտությամբ: Օկուպանտները սկսեցին մարդաորսը՝ ձերբակալելով Իրաքի քաղաքական և ռազմական էլիտային, մոտ 60 մարդու, որոնց զգալի մասը մահվան դատապարտվեց, մի մասն էլ բանտարկվեց: Ձերբակալվածների մեջ էր նաև Իրաքի պրեզիդենտ Սադամ Հուսեյնը, որ կախաղան հանվեց: Դա պատմության մեջ անմախաղեպ երևույթ էր: Ամերիկյան զորքերը ներխուժեցին անկախ և ինքնիշխան, ՄԱԿ-ի անդամ-պետություն՝ Իրաք, և նրանց հրամանով կախաղան հանվեցին նրա լեզիտիմ պրեզիդենտը և նրա մերձավոր զինակիցները: Դա արեց մի երկիր, որն իրեն համարում է աշխարհի ամենաժողովրդավարական երկիրը, մարդու իրավունքների հետևողական պաշտպան, դաս տալիս աշխարհի բոլոր երկրներին և ժողովուրդներին, թե ինչպես պետք է ապրել, ելնել ու նստել և հանդես գալիս օրենքի գերակայության ջատագով: Իրաքցիներն ու արաբական մյուս ժողովուրդները չներեցին ԱՄՆ-ին և նրա մանկլավիկ դաշնակիցներին նրանց իրագործած ոճրագործության համար, իսկ շատ երկրներ դատապարտեցին ԱՄՆ-ին և նրա երկդիմի քաղաքականությունը: Հենց այդ ժամանակ սկիզբ առավ Իրաքի արաբների, հայերի և ասորիների արտագաղթի առաջին ալիքը:

ԱՄՆ-ի ներխուժման արդյունքում Իրաքը կազմալուծվեց այն աստիճան, որ այսօր ի վիճակի չէ անգամ դիմակայելու Իսլամական պետություն կոչված ինքնակոչ, հանելուկային խալիֆայությանը, պահպանելու իր տարածքային ամբողջականությունը, նա ծվեն-ծվեն է լինում, և նրա հյուսիսային տարածքները՝ Մոսուլով

մենաազդեցիկ երկրներին, առաջին հերթին Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային: Արդիականացումը, որն ընդգրկում է բոլոր ոլորտները՝ պետական, հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական և այլն, անընդունելի էր ԱՄՆ-ի և եվրոպական ազդեցիկ երկրների համար, քանի որ դա կթուլացներ նորանկախ պետությունների կախվածությունը նրանցից և կամրապնդեր նրանց դիրքերը: ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիան, ձևականորեն ճանաչելով Ասիայի և Աֆրիկայի երկրների անկախությունը, միաժամանակ ձգտում էին և շարունակում են ձգտել նորանկախ պետությունները պահել իրենց քաղաքական և տնտեսական ազդեցության ներքո, ստիպել նրանց անվերապահորեն կատարել Վաշինգտոնից, Լոնդոնից, Փարիզից, Բեռլինից եկող հրամանները և կարգադրությունները: Իսկ դա արդեն հնարավոր չէր իրագործել հորդորներով, համոզելով և նման այլ լծակներ գործադրելով: Մնաց միակ ուղին՝ միջամտել այդ երկրների ներքին գործերին, կազմակերպել և հրահրել ներքին խռովություններ և այդ ուղիով հասնել գործող իշխանությունների տապալմանը՝ նրանց փոխարինելով իրենց դրածոներով: Նրանց հաջողվեց մի շարք երկրներում՝ Եգիպտոս, Թունիս, Եմեն, տապալել գործող պրեզիդենտներին, կառավարություններին և կառավարող կուսակցություններին՝ այդ երկրներում հրահրելով քաղաքացիական պատերազմներ, հեղաշրջումներ և ստեղծելով անտանելի քաղաքական մթնոլորտ և ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ: Նրանք հատուկ դաժանությամբ գործեցին այն ղեկավարների դեմ, որոնք դիմադրում էին արևմտյան երկրների ոտնձգություններին և պաշտպանում իրենց երկրների ազգային պետական շահերը(Բաշար Ասադ՝ Սիրիա, Մուամար Կադաֆի՝ Լիբիա և այլն): Արևմտյան տերություններին միացավ և նրանց հետ համատեղ շարունակում է գործել Թուրքիան, որը տառապում է տարածաշրջանային գերտերություն դառնալու մարմաջով՝ գտնելով, որ իր ազդեցության ոլորտում պետք է գտնվեն ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքն ու Յուսիսային Աֆրիկան: Սկսվեց մարդաորսը, որն ի գագաթնակետին հասավ և ամենանողկալի ձևով իրականացվեց Լիբիայի առաջնորդ Մուամար Կադաֆիի նկատմամբ, որը Լիբիան կառավարում էր 1969թ. սեպտեմբերի 1-ից, մոտ 42 տարի, և արդի Լիբիայի ստեղծողն էր: Տապալելով Սաուդիների միապետությունը՝ Կադաֆին հիմնեց Լիբիայի Հանրապետությունը, որը 1977թ. վերանվանվեց Լիբիական Արաբական Ժողովրդական Սոցիալիստական Ջամահիրիայի: «Որսավով» Կադաֆիին՝ նրա հետ վարվեցին ամենազարշելի ձևով, ծաղրածանակի ենթարկելով, տղամարդու արժանապատվու-

...ԿԱՂԱՖԻ ԱՆԵԾՔԸ

➤ **4** յունը ունեւհարելով՝ համաեվրոպական միասե-ռականության արժեքային համակարգի սկզբունքներին խստիվ ներդաշնակ: Դա իրականաց-վեց իրենց քաղաքակիրթ աշխարհի լուսատուներ հա-մարվող Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի թողտվութ-յամբ և նրանց ներկայացուցիչների քթի տակ, ԱՄՆ-ի և բազմաթիվ այլ երկրների քար լռության պայմաննե-րում: Նա արժանի չէր մնան վերաբերմունքի: Մենք 1985թ. խորհրդային պատվիրակության կազմում եղել ենք Լիբիայում, երբ Կադաֆիի համաձայնությամբ ու աջակցությամբ Լիբիայում անցկացվեցին Հայաստա-նի հետ բարեկամության և մշակութային օրեր, և ես գեկուցումով հանդես եմ եկել խորհրդա-լիբիական քա-ղաքական հարաբերությունների մասին: Եղել ենք տարբեր քաղաքներում, հանդիպել պետական բարձ-րաստիճան գործիչների, պատմաբանների, արվեստա-գետների, հասարակ մարդկանց հետ և լսել նրանց կարծիքները Կադաֆիի մասին: Ամեն երկրում էլ, իհար-կե, կան թերություններ, դժգոհներ և այլն, բայց լիբիա-ցիները շատ բարձր էին զնահատում Կադաֆիին, նրա նվիրվածությունը երկրին ու ազգին, նրա վիթխարի ներդրումը Լիբիայի զարգացման, առաջընթացի և ժո-ղովրդի սոցիալ-տնտեսական դրության բարելավման գործում: Նա մեծ հեղինակություն էր վայելում: Մնա-ցածը բամբասանք է:

Արևմտյան տերությունների միջամտությունից հե-տո Կադաֆին, որը հարկադրված էր անընդհատ փո-խել իր բնակատեղին, ամենայն հավանականությամբ կռահել էր իր ողբերգական վախճանը: Այդ մասին եմ վկայում նրա անեծքը՝ հասցեագրված Եվրոպային, և նրանում տեղ գտած նրա դատողությունները:

Ահա Կադաֆիի անեծքի ամբողջական տեքստը. «Դուք ըմբակոծում եք այն պատմեշը, որը թույլ չէր տալիս աֆրիկյան միգրացիան մտնի Եվրոպա, մի պատմեշ, որը զսպում էր «Ալ-Քաիդայի» ահաբեկիչնե-րին: Այդ պատմեշը Լիբիան էր: Դուք այն քանդեցիք: Դուք՝ ապուշներ եք: Հանուն Աֆրիկայի հազարավոր միգրանտների, «Ալ-Քաիդային» սատարելու համար թող վառվեք դուք դժոխքում: Եվ դա այդպես էլ կլինի»

(“Свободная Пресса”, 8 сентября 2015, с.5):

Ի տես ներկա անտանելի իրավիճակի, որը դեպի Եվրոպա գաղթականության նոր և հուժկու ալիք բարձ-րացրեց, որը սասանեց եվրոպական երկրների ներքին անդորրը, կայունությունն ու կյանքի ռիթմը, կարող ենք ասել, որ Կադաֆիի արդար անեծքն արդեն տեղ է հա-սել և գործում է: Նրա անեծքը լայնորեն մեկնաբան-վում է մամուլում: Տեղի սղության պատճառով բերենք դրանցից միայն մեկը, որի հեղինակն է Վլադիմիր Լին-դերմանը: Նա նշում է, որ Եվրոպային, որը սովոր է որևէ մեկին ամեն ինչում մեղադրել, չպետք է խղճալ՝ ընդգ-ծելով, որ «Ոչնչացնելով Հարավսլավիան, Իրաքը, Լի-բիան, Սիրիան և ուրիշ հանելով գաղթականների հոս-քը, նա ինքն ընտրեց ինքնառնչացման ուղին: Ծիծա-ղում էր իր կողմից ցինիկաբար ոչնչացված Կադաֆիի նախազգուշացումների վրա, որը սակայն ճիշտ դուրս եկավ» (“Завтра”, 11 мая 2011): Նա հույս է հայտ-նում, որ գուցե մի օր ամբարտավան և ինքնագոհ Եվ-րոպայի գերեզմանաքարի վրա որպես էպիթաֆիա կգրվեն Լիբիական Ջամահիրիայի հռչակված առաջ-նորդի անեծքի բառերը:

Եվ վերջին հարցը: Ինչպե՞ս կարող է այս քաոսա-յին վիճակն անդրադառնալ հայության և Հայաստա-նի վրա: Պատասխանը մեկն է՝ խիստ բացասաբար: Հայությունն առաջին հարվածը ստացավ 2003թ. Իրաք ամերիկյան ներխուժումից հետո, սակայն ամենածանր հարվածը նրանց հասցրին Իսլամական պետության ա-հաբեկիչները, որոնք գրավեցին Մոսուլ քաղաքն ու նրա շրջակայքը և սկսեցին հայ քրիստոնյաների դեմ հալածանքները: Այս տարվա մայիսի վերջերին մաս-նակցելով Բաղդադում գումարված միջազգային գի-տաժողովին՝ նվիրված Հայոց ցեղասպանության հար-յուրամյակին, հնարավորություն ունեցանք ավելի ճշգրիտ պատկերացում կազմելու իրաքահայության մասին: Պարզվեց հետևյալը. Մոսուլում՝ հայության եր-բեմնի կենտրոնում, այլևս ոչ մի հայ չկա: Բասրայում, որտեղ մի ժամանակ բնակվում էր երեք հազարից ա-վելի հայ, այժմ մնացել է ընդամենը երկու հարյուր հայ, Կիրկուկում՝ 120 հայ, խիստ պակասել է Բաղդադի հա-

յության թվաքանակը: Եվ եթե անցյալ դարավերջին Ի-րաքում բնակվում էր մոտ 20-25 հազար հայ, ապա այժմ մնացել է դրա մեկ երրորդը: Ահավոր վիճակում է հայտնվել սիրիահայ համայնքը , որն անասելի կո-րուստներ է կրել և շարունակում է կրել: Շատ քիչ բան է մնացել նախկին բարգավաճ համայնքից, ավերվել են Հալեպը և այլ բնակավայրեր, շատ հալեպցի հա-յեր հեռացել են Սիրիայից, որոնցից 15 հազարը հաս-տատվել է Հայաստանում, զգալի թվով սիրիահայեր հաստատվել են նաև ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և այլ երկրներում: Սկսվել է Դամասկոսի կործանման ծրագ-րի իրագործումը, որի թիկունքում կանգնած են Թուր-քիան և սուննի այլ ուժեր ու երկրներ: Արտագաղթի հետևանքով հայերի թիվը խիստ նվազել է նաև մեր-ծավորարևելյան մյուս երկրներում: Եվ եթե ամփոփե-լու լինենք, ապա կարելի է ասել, Մերծավոր Արևելքը դադարել է սփյուռքահայության կենտրոնը լինելուց: Համանման վիճակում են հայտնվել նաև մյուս քրիս-տոնյա հարանվանությունները՝ ասորիները, կաթոլիկ-ները, խալդեականները, հունադավանները և այլն: Ա-սորական քրիստոնյա համայնքի ղեկավարներից մե-կը՝ Կավան, Երևանում 2014թ. գումարված Եկեղեցիներ-ի համաշխարհային խորհրդի գումարած գիտաժողո-վում հայտարարեց, որ առնվազն տասը տարի հետո Մերծավոր Արևելքում այլևս ոչ մի քրիստոնյա չի լի-նի:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությա-նը, ապա ոչ մի պետության էլ դուր չի գալիս, որ հարևան երկրներում այս կամ այն ծավալի ռազմա-կան գործողություններ են ծավալվում, որոնք կարող են ընդլայնվել և լուրջ սպառնալիքներ ստեղծել, մա-նավանդ, երբ դրանց շարքում է մի այնպիսի անկա-ռավարելի արհեստածին պետություն , ինչպես Իրա-քի և Լևանտի Իսլամական պետություն-խալիֆայութ-յունը: Դա պահանջում է Հայաստանից շատ մեծ զգո-նություն, ստեղծված աննախադեպ իրավիճակի մաս-նագիտական խորը վերլուծություն և պահուստային ռազմավարական ու մարտավարական մշակված ծրագրերի առկայություն: Հակառակ դեպքում «Ի զեմ. Հայրենիքը վտանգի մեջ է» կոչը ուշացած կլինի:

Պրոֆեսոր Նիկոլայ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Գիտության վաստակավոր գործիչ

ՀՀ ԳԱԱ-ում քննարկվեցին Արցախի գիտական կենտրոնի հետ համագործակցության հեռանկարները

«Արցախի համար առաջնահերթային խնդիրը գի-տելիքների վրա հիմնված տնտեսությունն է: Հարկա-վոր է որոշել հիմնական գիտական ուղղությունները, որոնք կարող են օգնել՝ լուծելու տնտեսական հարցե-րը: Մյուս հիմնական խնդիրը երիտասարդ կադրերի պատրաստումն է, ովքեր կարող են լավ համադրել գի-տությունն ու կրթությունը տնտեսության զարգացման գործում:

Արցախի գիտական կենտրոնը պետք է լուծի այդ խնդիրները, իսկ ՀՀ գիտությունների ազգային ակա-դեմիան պատրաստ է ամեն կերպ աջակցելու», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոս-յանը սույն թվականի հոկտեմբերի 28-ին ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցած Արցախի գիտական կենտրոնի ներկա-յացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ նախագա-հության անդամները, գիտական հաստատություննե-րի տնօրենները, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կո-միտեի ներկայացուցիչը: Քննարկմանը ներկայացվեց Արցախի գիտական կենտրոնի հետ ՀՀ ԳԱԱ-ի գիտա-կան խմբերի համագործակցության փորձը: Նշվեցին ստույգ թեմաներ, որոնց շուրջ կարող է ծավալվել և զարգանալ հետագա համագործակցությունը: Մասնա-վորապես ուշադրություն դարձվեց Արցախում տեղե-կատվական տեխնոլոգիաների, գիտականորեն հիմ-նավորված ժամանակակից գյուղատնտեսության վար-ման մեթոդաբանության, բնական և բժշկական գի-տությունների զարգացման անհրաժեշտության վրա:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

«Նեմեսիս» օպերացիայի անհայտ էջերից

Ամստամտի հաղթական գորքերը 1918 թ. մտան Ստամբուլ: Նրանք պահանջեցին թուրքերից դատի տալ պատերազմի հանցա-գործներին: Ստեղծվեց Արտակարգ պատե-րազմական ատյան, որը գավառի իշխա-նություններին պարտադրեց Արտակարգ ատյանին ներկայացնել բոլոր հանցագործ-ներին վերաբերող գործերը՝ հեռագրերը, ծածկագրերը, իթֆիհատականներից ստաց-ված կարգադրությունները և կենդանի ան-ձանց վկայությունները, նրանց թալանի, խժոժությունների, չարաշահումների վերա-բերյալ: Հարցաքննությունների համար պի-տի ներկայանային Ատյանին՝ Թալեաթից սկսած մինչև ամենաստորին պաշտոնյանե-րը: Սակայն գլխավոր հանցագործներն ար-դեն ճողոպրել կամ թաքնվել էին: Բայց, այ-նուամենայնիվ, հարյուրից ավելի չարագործներ բեր-վեցին քննության:

Ապացուցված համարելով առաջին հարցաքննվող-ների՝ հայոց ջարդեր կազմակերպելու, խժոժություննե-րի ու թալանի մեջ, ոմանց կախաղանի, ոմանց թիա-պարտության դատապարտեցին և առաջին 11 հոգուն կախաղան բարձրացրին:

Եվ հանկարծ անգլիացիներն ընդհատեցին հանցա-գործներին հարցաքննելն՝ այն պատճառաբանութ-յամբ, թե մնացյալ հանցագործներին տեղափոխում են Մալթա կղզի, որտեղ գերի ընկած 8 կամ 10 զին-վոր կար՝ նրանց հետ մոտ 100 հանցագործի փոխա-նակելու համար: Այս ծիծաղելի պատրվակը հորինվեց



անգլիացիների ստացած շատ մեծ կաշառքի դիմաց: Կարծես թե դժվար էր Մալթայից 8-10 գերի զինվորնե-րի բերել Ստամբուլ և ոչ թե ամբողջ Ատյանի կազմը, 90 հանցագործներին՝ իրենց վերաբերող բազմաթիվ փաստաթղթերի հետ:

Դե անգլիացիները թուրքերից կաշառք վերցնելու մեջ հմտացել են դեռևս 1878 թ.-ից, երբ Կիպրոսը վերց-րին հայկական հարցը խափանելու դիմաց (հիշենք, որ այս կաշառքի մասին խոստովանել է ինքը՝ Լլոյդ Ջոր-ջը իր «Խաղաղության պայմանագրերի ճշմարտութ-յունը» գրքում):

Այսպես խափանվեց նաև հանցագործներին պատ-ժելու նպատակով ստեղծված պատերազմական ➤ **6**



ՄԵՐԳԵՅ ԳՈՐՈՒԵՑԿԻՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ

Երկար տարիներ բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Ջաքարյանը ջանադրաբար ու մեծ հմտությամբ հետազոտում է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ-ռուսական գրական կապերը և լուսաբանում դրանք խորքային ձևով՝ երևան բերելով մեկը մյուսին հետևող մենագրություններ, որոնք նորովի հետաքրքրություն են առաջացնում և անպայման արժեքավոր են թե՛ հայ և թե՛ ռուս բանասիրության համար:

Շատ պատեհ առիթով բոլորովին վերջերս մասնագետներին, նաև լայն շրջանակի ընթերցողներին գիտնականը ռուսերենով մատուցեց «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում» (1916-1921թթ.) արժեքավոր մենագրությունը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Գրքի տարբեր էջերում դրված են լուսանկարներ, որոնք փաստական ձևով ավելի տպավորիչ են դարձնում հեղինակի խոսքը: Նկարված են Հովհաննես Թումանյանն ու Սերգեյ Գորոդեցկին (1916թ.), Արտավազդ Թումանյանն ու Սերգեյ Գորոդեցկին (1916թ.) առաջինը նահատակի չքնաղ աչքերով, երկրորդը՝ Վանում տեսած թուրքերի ավերածություններից ու վայրագությունից խոր թախիծ պարունակող հայացքով: Գրքում տեսնում ենք Ս.-Գորոդեցկու նոթատետրից մի էջ՝ հայոց այբուբենի տա-

ռերով, որը նրան սովորեցնում էր Արտավազդ Թումանյանը: Շատ տպավորիչ են հատկապես Վանա լճի, Վան քաղաքի, Վանի բերդի, Բայազետի բերդի և այլ բնակավայրեր՝ արված ջրաներկով, որոնք վկայում են ռուս գրողի նկարչական ակնհայտ ծիրքի մասին: Հիմա չկա հին Վանը, որի մասին ասվել է՝ «Երկնքում դրախտը, երկրի վրա Վանը»: Այս միտքը հատուկ շեշտում է Սերգեյ Գորոդեցկին, որովհետև 1916-ին իսկապես Վանը թաղված է եղել այգիների մեջ. այդ մասին վկայում են շատերը, այդ թվում՝ ֆրանսիացի Իվ Տերնոն իր «Armenie 1900» գրքում, որը ստեղծել է Ժան Բլոյ Քեթաքճյանի հետ (տե՛ս Yves Ternon; J.-C. Kebabdjian, Armenie 1900, Paris, 1980):

Ֆրանսերեն գրքում կարդում ենք. «Վանն այս աշխարհում, դրախտը՝ այն: Սա իրոք այդպես է եղել» (էջ 25): Այս նույն միտքը բազմաթիվ օրինակներով և իր ջրաներկ պատկերներով հաստատում է Սերգեյ Գորոդեցկին, որի համար հայերի՝ Վանում ստեղծած հնագույն քաղաքակրթության հուշարձաններն ավերվել ու թալանվել էին իր աչքի առաջ, իսկ Վանի խաղաղ բնակիչները՝ ոչնչացվել:

Մարդու ներաշխարհը տակնուվրա անող փաստերով Գորոդեցկին գրում է արյան ու մահվան ճիրաններից ազատված բոլորովին մանկահասակ որբերի մասին, որոնց փրկության մեջ տեսնում է Հայաստանի ապագան: Տարիներ անց, երբ Գորոդեցկին այցելել է Խորհրդային Հայաստան, զգացել է, թե որքան ջերմություն կա այն մարդկանց վերաբերմունքում, որոնք երբեք չեն մոռացել տարիներ առաջ իր կատարած մարդասիրական

սխրանքը:

Անուշավան Ջաքարյանը ներկայացնում է Սերգեյ Գորոդեցկու հայանպաստ գործունեությունն ու Հայաստանին նվիրված ստեղծագործությունները՝ շաղկապելով դրանք քաղաքական իրադարձություններին, հայ-ռուսական տարատեսակ կապերին ու առնչություններին:

Գրքի ամսոճաց էջերից են Ս.Գորոդեցկի և Հովհ. Թումանյան անհատների առաջին հանդիպման նկարագրությունը և նրանց հետագա գրական ու մարդկային փոխհարաբերությունները, որոնք հատկապես օգտակար են թումանյանագետներին, մասնավոր դր գրքի հեղինակը կատարում է որոշ համոզիչ ճշգրտումներ: Ռուս գրողը խոստովանում է, թե ինքը ցնցված է Թումանյանի ազգային նվիրումից, նրա գործնական կեցվածքից, դեպի մարդ արարածն ունեցած եզակի վերաբերմունքից: Պատահական չէ, որ նա խոստովանում է, թե Հայաստանը սիրեց Թումանյանի միջոցով, նաև նրան ընդունեց որպես ռուսուհի և անվերապահորեն հավատաց այդ երկրի լուսավոր ապագային ու հարատևմանը:

1919 թ. Գորոդեցկին այցելում է նորանկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևան ու զարմանքով ու հիացմունքով տեսնում, թե ինչպես գաղթականներով լի, աղքատության շեմին կանգնած Երևանը

փորձում է շտկել հայության վիճակը. ամենուր հայերը համառորեն ու ջանադիր աշխատում են, և ոչինչ բուտաֆորական չկա նոր հանրապետության կյանքում. Երևանն առաջին քայլերն է անում իր ինքնուրույն կյանքի համար:

Խորապես մերժելով թուրքական կառավարության հայաջինջ քաղաքականությունը՝ Գորոդեցկին խոսում է հայերի՝ արդեն մի քանի դարի պատմություն ունեցող ռուսական կողմնորոշման մասին:

Ուշագրավ է Հովհ.Թումանյանի նկատումը, թե այլ կառավարություններին բնավ էլ չի հետաքրքրում հայերի ճակատագիրը:

Գրքում տեսնում ենք նաև 1915-ին հետևած Հայաստանի քաղաքական վիճակի իրական պատկերը, հատկապես գորավար Անդրանիկի այն խոսքերի վկայակոչումը, որով նա դիմում է անգլիական բանակի մայոր Գիբոնին: Անդրանիկը փաստացի մերկացնում է անգլիական կառավարության դաժանությունը հայերի ճակատագրի հանդեպ: Չէ՞ որ օրհասական վիճակում գտնվող հայ ժողովրդի 300.000 ռուսական բանակի զինվորներ Անտանտայի կողմից կռվում էին՝ ցուցաբերելով անասելի խիզախության օրինակներ: Այս փաստերի կողքին Անգլիայի կառավարության աչքի առաջ մորթվում ու ոչնչանում էր աշխարհի համար կարևոր ու հին քաղաքակրթությունն իր մեջ կրող հայ ժողովուրդը:

Գորոդեցկին գրել է նաև լեգենդար սասունցիների մասին, որոնք գերության մեջ գերադասում են մեռնել, քան թե որևէ ուտելիք ընդունել: Իսկ ոմանք էլ ստորացված լինելուց կամ գերությունից գերադասում են ինքնակամ մահը և երգը շուրթերին՝ չպարտված ու հպարտ կանայք ու վիթխարի տղամարդիկ շուրջպարով մետվում են անդունդը՝ այդ հերոսականությամբ ցնցելով թուրքերին:

Ա. Ջաքարյանը մանրամասն գրել է նաև Գորոդեցկու՝ 1918 թվականին Թիֆլիսում լույս տեսած «Հայաստանի հրեշտակը» գրքի մասին՝ գետեղելով այդ գրքի կազմի լուսանկարը՝ երկնային քահանայապետության հրեշտակներին հատուկ աստվածային հոգիների բազմաթև մի պատկերով: Գրքում Հայաստանի հրեշտակը վերևից դիտում է ավերակված Հայաստանն ու նրա մորթված գավակներին և հզոր ծայրով ոգեկոչում նրանց ու կանխատեսում, որ երկրի վրա ապրող բոլոր ազգերի մեջ ամենամեծ դժբախտություն ճաշակած ազգը վերածնվելու է ու տեսնելու է իր երջանիկ ապագան:

Ըստ այս գրքում բերված փաստերի՝ Սերգեյ Գորոդեցկին 1917-1921 թթ. եղել է Անդրկովկասը ռուսական գրականությանն ու արվեստին կապող հիմնական օղակը:

Ինչպես Գորոդեցկին լավատեսորեն էր նայում Հայաստանի ապագային, նույն կերպ Անուշավան Ջաքարյանի գիրքը գրված է լուսավոր ռիթմերով: Գրքի հեղինակը հավաստում է շատ կարևոր ու մշտապես հիշելի պատգամ. մենք հիշում ու գնահատում ենք բոլոր նրանց, ովքեր կիսում են հայ ժողովրդի երբեք չափազույց ցավը, գնահատում են մեր արժանիքները և հավատում են հիմնավորք ու հերոսական ժողովրդի հարատևմանը:

Աելիտա ԴՈՆՈՒՄԱՆՅԱՆ
Բանասիրության դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

«Նեմեսիս» օպերացիայի...

➤ **5** արտակարգ ատյանի գործունեությունը:

Ի՞նչ էր մնում հայերին անել՝ իրականացնել հեռակա կարգով մահվան դատապարտվածների մահապատիժը:

Դա մի հսկայական աշխատանք էր՝ վրիժառուներ մարգելու ու թաքնված իթթիհատականներին հայտնաբերելու և մահավճիռն իրականացնելու տեսանկյունից:

Հայերը ստեղծեցին գաղտնի մի կազմակերպություն՝ անվանելով այն Նեմեսիս: Այս անունը վերցված է հունական դիցարանից. Nemesis էր կոչվում վրիժառության աստվածուհին: Վրիժառուներ շատ կային, բոլոր հայերն էլ ունեին զոհված հարազատներ: Սակայն վրիժառուն պիտի լիներ անվրեպ, որպեսզի սխալվելու դեպքում ինքն էլ չդառնար զոհ:

Ընտրվեց երկու վրիժառու՝ Երկանյանն ու Շիրակյանը:

Բայց միայն նշանառուներով գործը չէր կատարվի, եթե չլինեին հանցագործներին հայտնաբերող, նրանց հարմար վայրերում և հարմար ժամին հետախուզող անձինք: Ահա նման հետախուզի դերը հանձն առավ Կարապետը, որ գերազանց գիտեր թուրքերենը:

Մեզ մոտ սովորություն է դարձել նշել վրիժառուներից միայն նրանց անունները, ովքեր սպանել են մեր ազգի՝ արմենոցիդի կազմակերպիչներին՝ միշտ մոռացության տալով այն անձանց անունները, ովքեր ա-

միսներով հերթապահել են այդ հրեշների թաքստոցների մոտ և որոշել նրանց զնդակահարելու պահը: Ահա այդպիսի հերոսներից մեկն է Կարապետը:

Ո՞վ էր Կարապետը կամ Հրաչը: Նա ծնվել է 1892 թ., Յոզղաթում, ապրել է Սեբաստիայում: 1914 թվականին ավարտել է Կոստանդնուպոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Նույն թվականին ընդունվել է սպայական ուսումնարան:

1918-ին նա արդեն սպայական կոչում ուներ: Խուսափելու համար զինվորական ծառայությունից՝ մի թուրք սպայի անձնագրով մեկնում է Հալեպ և «անհետանում»: 1919-ին նա վերադառնում է Պոլիս և տեղեկանում Հայ հեղափոխական դաշնակցության ծրագրած «Նեմեսիս» գաղտնի օպերացիայի մասին:

Ինչպես վերն ասացինք օտար երկրներում թաքնվող, անունները և հաճախ արտաքինը փոխած թուրք ոճրագործներին նախ գտնել էր պետք և տեղեկացնել մահապատիժն իրագործող հայ վրիժառուներին:

Հրաչ Փափազյանը (կամ Կարապետ) հանձն է առնում մեկնել Բեռլին, փնտրել և գտնել չարագործներին: Նեմեսիսի ղեկավարներին հայտնի էր արդեն, որ Բեռլինում են թաքնվում Թալեթը, Բեհաեդդին Շաքիրը, Ջեմալ Ազըմին, Սայիդ Հալիմ փաշան, Նազիմ Ջուլիդը և այլք: Ստանալով ընկերների համաձայնությունը՝ զգուշության համար որոշում է թլպատվել և թուր-

քի անձնագրով մեկնում է Բեռլին՝ որպես Մեհմեդ Ալի. ըստ հորինված կենսագրության՝ նա ծանր հիվանդ էր, պետք է ախտորոշվեր և բուժվեր: Բայց քանի որ գերմաներեն լավ չգիտեր, վաթանդաշների (հայրենակիցների) օգնության կարիքն ուներ:

Շուտով Բեռլինում նա գտնում է Ազըմին պատկառող ծխախոտի խանութը, որտեղ տիրություն էր անում նրա ավագ որդին: Հրաչը, ներկայանում է որպես մեծահարուստ թուրք, որ Բեռլին է եկել՝ բուժվելու համար: Եվ քանի որ լեզու չգիտի, խնդրում է իրեն օգնել: Նրանք մտերմանում են:

Օրերից մի օր քիչ էր մնում նա մերկացվեր որպես հայ: Ազըմիի տղայի հետ նրանք սուրճ էին խմում խանութում, երբ ներս մտավ Հրաչի՝ Ստամբուլի դասընկեր մի թուրք: Բնականաբար, թուրքը մատնել էր նրա հայ լինելը: Ազըմիի տղային համոզելու համար Հրաչը նրան հրավիրում է բաղնիք և որպես ապացույց ներկայացնում իր թլպատությունը: Նրանց մտերմությունը շարունակվում է: Մի անգամ Ազըմիի տղան ներդրություն է խնդրում Հրաչից, որ խանութը շուտ է փակելու, որովհետև իրենց տանը մեծ խնջույք է լինելու, որը կշարունակվի ամբողջ գիշերը...

Հաջորդ առավոտվա լուսաբացին Ազըմիի տուն են մտնում վրիժառուներ Շիրակյանը և Երկանյանը ու զնդակահարում են ոճրագործներ Ջեմալ Ազըմին և Բեհաեդդին Շաքիրին: Փափազյան Հրաչի հետագա ճակատագիրը մեզ անհայտ է...


Ներսես ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԱՐԱՔԱՆԻ ԼԵԶՎՈՎ ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Այս տարի ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ աշխարհում լայնորեն նշվում է Հայոց ցեղասպանության հարյուրամյակը: Տարբեր երկրներում գումարվում են դրան նվիրված գիտաժողովներ, հրատարակվում գրքեր ու հոդվածներ, կանգնեցվում հուշարձաններ և այլն: Դրանցից ամենասն չմնացին նաև արաբական երկրները: Հիշենք թեկուզ մայիս ամսին Իրաքի մայրաքաղաք Բաղդադում գումարված արաբական տարբեր երկրների գիտնականների, հասարակական-քաղաքական գործիչների, հոգևոր առաջնորդների համաժողովը, որը համարվեց կարևոր իրադարձություն: Իսկ օրերս Հալեպում արաբներն լույս տեսավ «պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, արաբագիտական հայկական դպրոցի հիմնադիր, միջազգային մեծ ճանաչում ունեցող բազմավաստակ գիտնական Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայերի ցեղասպանությունը արաբական պատմագրության քննական լույսի ներքո (Հայոց ցեղասպանության և արաբներին կախաղան հանելու հարյուրամյակի կապակցությամբ. 1915-2015թթ.)» մենագրական ուսումնասիրությունը: Աշխատությունը հայերենից արաբերեն է թարգմանել և հրատարակել այդ բնագավառում մեծավաստակ մտավորական Ալեքսանդր Քեշիշյանը: Հարկ է նշել, որ վերնագրի մեջ «արաբների կախաղան համաման» բառերը թարգմանչի հավելումն են, որն արվել է՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ երիտ-

թուրքերը ծրագրել էին ցեղասպանության ենթարկել նաև արաբներին, և երիտթուրքական եռապետության անդամ Ջեմալ փաշայի հրամանով 1915-1916թթ. Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում, Ալեքսիում և Երուսաղեմում կախաղան հանվեց արաբական քաղաքական էլիտան:

Պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը հայտնի անուն է արաբական աշխարհում: Նա բազմիցս եղել է արաբական երկրներում, հանդիպումներ ունեցել Իրաքի, Սիրիայի, Լիբանանի պրեզիդենտների, եգիպտոսի, Յորդանանի, Լիբիայի, Ալժիրի, Պաղեստինի բարձրաստիճան ղեկավարների, քաղաքական-հասարակական գործիչների, գիտնականների հետ, գիտական զեկուցումներով հանդես եկել արաբական երկրների տարբեր համալսարաններում, գիտական կենտրոններում և այլն: Նրա տասնյակ աշխատություններ՝ մենագրություններ և հոդվածներ, արաբերեն հրատարակվել են Բեյրութում, Բաղդադում, Կահիրեում, Դամասկոսում, Հալեպում, Ալ-Քուվեյթում և այլն, այդ թվում՝ «Արաբական պետությունների պատմությունը (VII դ. -2005թ.)» քառահատոր կոթողային աշխատությունը նույն Ալեքսանդր Քեշիշյանի թարգմանությամբ, որի նման անգամ իրենք՝ արաբները չունեն: Պրոֆեսոր Ն.Հովհաննիսյանի գիտական ղեկավարությամբ արաբական երկրների մոտ մեկ տասնյակ գիտնականներ պաշտպանել են իրենց գիտական թեզերը և ստացել դոկտորի գիտական աստիճան:



Պետք է նշել նաև, որ շատ մեծ է հայ գիտնականի վաստակը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում: Պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանը հեղինակն է Հայոց ցեղասպանության մոտ 130 աշխատությունների, այդ թվում՝ 30 մենագրական ուսումնասիրությունների, հրատարակված աշխարհի 15 լեզուներով ԱՄՆ-ում, Անգլիայում, Գերմանիայում, Ռուսաստանում, Թուրքիայում, Իրանում, Հունգարիայում, Ճապոնիայում, Կորեայում, Ռումինիայում և բնականաբար նաև արաբական երկրներում:

Հաշվի առնելով Ա.Քեշիշյանի մեծ վաստակը հայ պատմաբանների աշխատություններն արաբերեն ներկայացնելու գործում՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը 2011թ. նրան պարգևատրել է Հնդկահայագրով, իսկ 2012թ. նա Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով պարգևատրվել է Մովսես Խորենացու մեդալով:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտ

«ԼՐԱՔԵՐԸ» 75 ՏԱՐԵԿԱՆ Է

խմբագրել են հասարակագիտության ու հայագիտության այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են՝ Ս. Կարապետյանը, Հ. Բատիկյանը, Հ. Օրբելին, Խ. Մոնջյանը, Ս. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Ստեփանյանը, Գ. Ասլանյանը, Գ. Աբովը, Հ. Ինճիկյանը, Ծ. Աղայանը, Վ. Միքայելյանը: Ամսագրի խմբագիրն այսօր պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյանն է:

Գիտնականների ավագ և միջին, իսկ վերջին տասնամյակներին նաև երիտասարդ սերնդի ներկայացուցիչների համար միշտ էլ պատիվ է եղել «Լրաբերում» տպագրվելը:

1000–1500 տպաքանակով երկլեզու (հայերեն և ռուսերեն) ամսագիրը տարածվում էր ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Այսօր թեև նվազել է տպաքանակը (այն չի հասնում 300-ի), սակայն իր հաստատուն ավանդույթներն ունեցող արդեն ուշ եկող, բայց ժամանակին հայտնվող քառամսյա հանդեսը հասնում է իր ընթերցողներին աշխարհի տարբեր երկրներում, որտեղ հայ գիտական մտքով հետաքրքրվող կա:

Տասնամյակներ շարունակ հայ հասարակագետներն ունեցել են ձեռքբերումներ, գիտական խիզախումներ, որոնք նախապես գիտական և ընթերցող լայն հասարակայնությանը ներկայացվել են «Լրաբերի» էջերից: Ճիշտ է, ինչպես մեր հասարակական-քաղաքական ողջ կյանքը, այնպես էլ ամսագիրն այդ ժամանակաշրջանում կրել է երկրում, հանրապետությունում տիրող մթնոլորտի անմիջական կնիքը: Անկասկած, տպագրվող նյութերի մեջ որոշ տեղ են գրավել «առաջնահերթ» խնդիրները: Դրանց կողքին, սակայն, ամսագրում տպագրված նյութերի ծանրակշիռ մասն արժարժել է հայ ժողովրդի պատ-

մության, մշակույթի, առանձնապես հայագիտության հանգուցային հիմնախնդիրները: Դրանց շարքում աչքի ընկնող տեղ են գրավել հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, հայ հին, միջնադարյան ու նոր շրջանի պատմության, լեզվի, գրականության ու արվեստի հարցերը: Հայ ժողովրդի պատմության կեղծարարների դեմ պայքարի խնդիրը եղել է ամսագրի համակ ուշադրության կենտրոնում: 1970-ական թվականների կեսերից ամսագրի էջերից արժանի հակահարված է տրվել մեր ռիսերին «բարեկամների» բազմապիսի ոտնձգություններին:

Ղարաբաղյան շարժումը, ազգային ինքնագիտակցության զարթոնքը թարմ շունչ հաղորդեցին «Լրաբերի» գործունեությանը: Անվարան կարելի է ասել, որ այն դարձավ շարժման գիտական հիմնավորման առաջամարտիկը, և սատար կանգնեց նրան:

Ամսագրի էջերում սկսեցին տպագրվել հայագիտական հրատապ հարցադրումներով և նորովի մեկնակետեր պարունակող բազմաթիվ արժեքավոր հետազոտություններ Ղարաբաղի հին ու նոր պատմության, երկրամասի սոցիալ-տնտեսական վիճակի վերլուծության, մշակույթի ու արվեստի կոթողների նկարագրության, նրա ժողովրդի արդար պայքարի, Նախիջևանի հայաթափման հարցի, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության, Հայկական հարցի, հայկական ինքնապաշտպանական մարտերի, Ջանգեզուրի իրավիճակի (1918–1920 թթ.), Բաքվում և Ադրբեջանի հայաշատ վայրերում 1918 թ. ու դրանից հետո ադրբեջանական կառավարության կազմակերպած հայկական կոտորածների վերաբերյալ: Այդ ամենի նկատմամբ մեծ տերությունների երկդիմի քաղաքականության մերկացումը

պատմական վավերագրերով ու արխիվային փաստաթղթերով, մեր պահանջատիրությունը. ահա այն առաջնային խնդիրները, որոնք լուսաբանել և շարունակում է լուսաբանել հանդեսը:


Միով բանի՜լ՝ պարբերականը տասնամյակներ շարունակ ներկայացրել ու ներկայացնում է ԳԱԱ-ի դեմքը, լայն հասարակայնությանը ծանոթացնում ակադեմիայի գիտական արտադրանքին: Անցնելով գիտահրատարակչական փառավոր ուղի՝ պարբերականը դարձել է մեր (և ոչ միայն մեր) երկրի գիտական կադրերի պատրաստման հայտնի դպրոց: Հաղթահարելով բազում դժվարություններ՝ հանդեսը շարունակում է իր գեղեցիկ ու բարի ավանդույթները: Ցավոք, ակադեմիայի ավագագույն հանդեսն այսօր չունի հոնորար վճարելու հնարավորություն, չունի նաև իր մատենագիտությունը:

Տողերիս հեղինակը երկար տարիներ՝ 1980-ից մինչև 1993 թ., եղել է «Լրաբերի» պատասխանատու քարտուղարը, մեր երկրի հասարակական-քաղաքական կյանքի այդ բուռն ժամանակաշրջանում խմբագրության կոլեկտիվի հետ անցել դժվարին, բայց, կարծում են, պատվաբեր ուղի:

Շնորհավորելով հանդեսի հիմնադիրին՝ ՀՀ ԳԱԱ նախագահությանը, խմբագրության աշխատակազմին ու խորհրդին, հեղինակային ողջ կոլեկտիվին և ընթերցողներին պարբերականի 75-ամյակի առիթով՝ մաղթում ենք ստեղծագործական նորանոր ձեռքբերումներ, մտահղացումներ, ամենայն բարիք և դժվարությունները հաղթահարելու կամք ու կարողություն:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔՐՅԱՆ
«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ,

պատասխանատու քարտուղար



Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի անդամիկ և ամենաերկարակյաց պարբերականը՝ «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսը, բոլորեց իր 75-ամյակը: Հայ մամուլի բազմադարյա պատմության մեջ նա ունի իր ուրույն տեղը, ծննդյան օրից եղել է հանրապետության գիտական մտքի առաջատար ամբիոններից մեկը:

Սկզբնապես՝ 1940 թ. մինչև 1943 թ., պարբերականը ԽՍՀՄ ԳԱ նախագահության հայկական մասնաճյուղի՝ Արմֆանի հասարակական և բնական գիտությունների «Տեղեկագիրն» էր, ապա մինչև 1965 թ. դեկտեմբերը եղել է Հայաստանի ԳԱ-ի «Տեղեկագիր հասարակական գիտությունների» պարբերականը: 1966 թ. ամսագիրը վերանվանվեց «Լրաբեր հասարակական գիտությունների»:

Հանդեսի այսօրվա հեղինակությունն ու ընթացքը հենվում են գնահատելի ավանդույթների վրա, այդ ընթացքն արժանի շարունակությունն է 1940–80-ական թվականների հասարակագիտական ազդեցիկ պարբերականի, որ

ՀԵՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մինչև ճաշը մի՛ կարդացեք

Հեռախոսի զանգը ակադեմիկոս Եվգենի Տարելին արթնացրեց վաղ առավոտյան:

- Ընկեր Տարել, դուք կարդացե՞լ եք այսօրվա «Պրավդան»:
- Ո՛չ, ընկեր Ստալին, դեռ չեմ կարդացել:
- Դե, ուրեմն լավ է: Եվ մի էլ կարդացեք: Իմ ուշադրությունից վրիպել է:

Տարելն բաց արեց թերթը. այնտեղ տեսավ իր մասին տպված ծավալուն ու ջախջախիչ հոդված վերջին գրքի մասին:

Բոլորը զարմացած էին, թե Տարելն որքան թեթև է տանում այդ հարվածը: Հաջորդ օրը նոր «Պրավդա»-ն դրական, գովերգող հոդված տպագրեց Տարելի գրքի մասին:



Ստրադիվարիուսի հեղ մենք պայմանագիր չունենք

Մի անգամ նշանավոր ջութակահար Յաշա Հեյֆեցին ելույթի հրավիրեցին Լոնդոնի հեռուստատեսություն: Նա համերգի կազմակերպիչներին խնդրեց, որ ելույթից առաջ հայտարարեն, որ ինքը նվագելու է մեծն Ստրադիվարիուսի ձեռքով պատրաստված ջութակով:

- Սակայն ելույթի կազմակերպիչները կտրուկ առարկեցին.
- Դա անհնարին է: Անգլիական հեռուստատեսությունը երաժշտական գործիքներ արտադրող ֆիրմաներին գովազդելու պայ-

մանագիր չունի:

Փիլիսոփաների դառը ճակատագիրը

Հայտնի բան է՝ փիլիսոփաներին դժվար են հասկանում: Այդ կապակցությամբ Շել-լինգն ասում էր. «Բավական է, որ ես ինքս ինձ հասկանում եմ»: Իսկ Հեգելը մեռնելուց առաջ ասաց.

- Միայն մեկ մարդ հասկացավ ինձ... այո՛, հասկացավ ինձ: Ապա քիչ լռելուց հետո, հառաչանքով ավելացրեց. «Ո՛չ, նա էլ ինձ չհասկացավ»:

Փչացրած մարմարը

Ձախողակ մի քանդակագործ, Փարիզի սալոններից մեկում հանդիպելով քանդակագործ Մար Անտակուլսկուն, հարցրեց.

- Վարպետ, Ձեր կարծիքով, ինչպես է ստացվել իմ քանդակած Նեպտունի արձանը: Անտակուլսկին մի քիչ մտածեց և պատասխանեց.
- Ես պաղատում եմ Աստծուն ներել Ձեզ՝ մարմարի այդ հրաշալի կտորը փչացնելու համար:

Այդպես էլ հանճար կլինի

Էյնշտեյնը և կոմպոզիտոր Յան Էյսլերը մի անգամ միասին հայտնվեցին ինչ-որ հավաքույթուն: Հյուրընկալները լավ գիտեին, որ Էյնշտեյնը հրաշալի ջութակ է նվագում: Խնդրեցին նրան նվագակցել Էյսլերին: Կոմպոզիտորը համաձայնվեց: Էյնշտեյնը լարեց ջութակը, բայց... բան դուրս չեկավ. քանի անգամ Էյսլերը նվագում էր նախերգանքը, Էյնշտեյնը ոչ մի կերպ չէր կարողանում բռնել տակտը:

- Էյսլերը ելավ դաշնամուրի մոտից և զայրացած ասաց.
- Ես չեմ կարողանում հասկանալ, թե ինչպես է ամբողջ աշխարհը հանճարեղ համարում մի մարդու, որ չի կարողանում հաշվել մինչև երեքը:

Արժանի պապասխան

1586 թվականին Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը Հռոմի պապ Սիսթոի V-ի մոտ ուղարկեց Կաստիլիայի երիտասարդ Կոննետաբլին՝ շնորհավորելու նրան գահ բարձրանալու առթիվ և երջանկություն և առողջություն մաղթելու:

Պապը, վիրավորված այն բանից, որ նրա մոտ են ուղարկել գրեթե պատանի պատվիրակի, զայրացած նետեց.

- Միթե՞ ձեր թագավորի շրջապատում չկային ուրիշ մորուքավոր և պատվելի մարդիկ, որ ինձ մոտ է ուղարկել անմորուս մի պատանու:

- Եթե իմ թագավորը իմանար, որ մարդու արժեքը մորուքն է, ապա արքան Ձերդ սրբազանության մոտ կուղարկեր ոչ թե ազնվականի, այլ այծի,- կտրուկ պատասխանեց իպարտ իսպանացին:



Մի անգամ Պավել կայսրը հերթական ընդունելության ժամանակ, որտեղ մեծ թիվ էին կազմում տոհմիկ իշխանները, հարցրեց կոմս Ռոստոպոլիչին:

- Ասացեք ինձ, ինչո՞ւ դուք մինչև հիմա իշխան չեք:
- Ձերդ մեծություն, կարո՞ղ եմ ասել իսկական ճշմարտությունը:

Հավանություն ստանալով՝ կոմսը ասաց.

- Իմ նախնին, որ Ռուսաստան էր եկել խորը ծնունդ...
- Ի՞նչ կապ ունի ծնունդը նրան շնորհված ազնվականի տիտղոսի հետ,- ընդհատեց կայսրը:

- Երբ մեծատոհմիկ թաթարն առաջին անգամ եկավ արքունիք, նրան առաջարկեցին ընտրություն կատարել՝ կամ մուշտակ, կամ իշխանական տիտղոս: Քանի որ իմ նախնին եկել է սաստիկ սառնամանիքի ժամանակ, նախապատվությունը տվեց մուշտակին:

Ակադեմիական նոր հրապարակություններ

- Հեղ. կոլեկտիվ - Տիգրան Զուխաճյանի ստեղծագործությունը. գիտական նստաշրջանի նյութեր:
- Մ. Գալստյան - Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների միգրացիան (եթնոսոցիոլոգիական հետազոտություն):
- Հեղ. կոլեկտիվ - Սիրիահայերը Հայաստանում, ինտեգրման ուղիները:
- Հեղ. կոլեկտիվ - Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, գիտական հոդվածների ժողովածու-2015:
- А. Закарян - Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916-1921гг.).
- Հեղ. կոլեկտիվ - Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ,հ.2 :
- Ա. Արևշատյան - Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ:
- Կ. Աշուղյան - Փիլիսոփայական և գեղագիտական միտքը 13-14-րդ դարերի հայ քերականության մեկնություններում:
- Ռ. Միրունյան - Խորեն Աջդզյան:
- Հեղ. կոլեկտիվ - Հայոց ցեղասպանություն-100. միջազգային գիտաժողովի գեկուցումների դրույթներ:

- Հեղ. կոլեկտիվ - Վիշապ քարակոթողները:
- Մ. Մկրտչյան - Սիմվոլիզմ. արձագանքը հայ կերպարվեստում XIX դարի վերջ - XX դարի սկիզբ:
- Ա. Աղամյան - Տիգրան Զուխաճյանի դաշնամուրային ստեղծագործությունը:
- Հ. Հարությունյան - Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.:
- «Բանբեր հայագիտության», 2015թ., № 2:
- Հեղ. կոլեկտիվ - Ջահուկյանական ընթերցումներ. ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի ծննդյան 95-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր:
- Ա. Բայադյան, Հ. Մարկոսյան - Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում:
- Э. Хачиян - Сейсмические воздействия и прогноз поведения сооружений.
- Գ. Ցականովա, Ա. Բոյաջյան - Սպիտակուցային ինժեներիա:
- Հեղ. կոլեկտիվ - Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար՝ արևմտահայերենի բաժնի գիտաշխատող (1 տեղ, 0,5 դր.), կրտսեր գիտաշխատող (1 տեղ, 0,5 դր.), հայոց լեզվի պատմության բաժնի կրտսեր գիտաշխատող (1 տեղ, 0,5 դր.):

- Մրցույթին կարող են մասնակցել՝ ա/ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող գիտնականները,
- բ/ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող մասնագետները:
- Ամերաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,

ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը հայտարարում է մրցույթ գիտաշխատողի թափուր տեղերի համար.

- սննդային շղթաների ռիսկի գնահատման տեղեկատվական և վերլուծական կենտրոն (1 հաստիք): Դիմողները պետք է ունենան թեկնածուի գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ:
- Շրջակա միջավայրի երկրաքիմիայի բաժին (1 հաստիք): Պահանջվում է շրջակա միջավայրի երկրաքիմիայի և ստատիստիկայի մասնագետ, որն ունենա թեկնածուի գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ:
- Ամերաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.
- ա) դիմում,

- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի պատճենը,
- զ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- է) հրատարակված աշխատանքների ցանկ,
- ը) բնութագիր վերջին աշխատավայրից:
- Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 56 53 37:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտը հայտարարում է մրցույթ «Նյութագիտության» լաբորատորիայի վարիչի թափուր տեղի համար:

Ամերաժեշտ փաստաթղթերը հայտարարության օրվանից մեկ ամսվա ընթացքում պետք է ներկայացնել հետևյալ հասցեով՝ 0203, Աշտարակ,-2, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ:

Տեղեկությունների համար դիմել հետևյալ հեռախոսահամարով (374 10) 28-81-50:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24թ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 20.11. 2015 թ.: Տպաքանակը՝ 500: gitutyun@sci.am "ГИТУТЮН" ("Hayka") газета НАН РА